ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 30-ը նոյեմբերի 2017թ.
Ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոլյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյանին:
Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Բժշկական պարագաների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում	Հասցե
1.	ԱՁ Գևորգ Հովհաննիսյան	ք. Երևան, Ավան Չարենց թաղ. 15շ. բն. 49.
2.	«Մեդիտեք» ՍՊԸ	ք. Երևան, Ծ. Իսակովի 22/3
3.	«Սիտի սայնս» ՍՊԸ	ք. Երևան, Սարյան 24 բ/30
4.	«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ	ք. Երևան, Ավետիսյան 76շ. բն. 17
5.	«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ	ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23
6.	«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ	ք. Երևան, Ֆուչիկի 27/14
7.	«Նատալի ֆարմ» ՍՊԸ	ք. Երևան, Տիչինա 3-րդ նրբ 2/2

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում **05.12.2017թ., ժամը 11:00-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնեասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգին Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում (Հավելված N 1) նշվել է, որ Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանը ցանկություն ունի մասնակցելու ընթացակարգի 2-րդ չափաբաժնին, սակայն գնային առաջարկում որպես չափաբաժնի համար նշված է «1»: Հանձնաժողովը հնարավորություն չունի պարզելու, թե մասնակիցը կոնկրետ որ չափաբաժնի մասով է գնային առաջարկ ներկայացրել, քանի որ թե 1-ին և թե 2-րդ չափաբաժինների CPV անվանումները (որը նշվել է մասնակցի կողմից) նույնն են՝ «Ռենտգեն նկարների ժապավեններ»: Ուստի անհրաժեշտ է գրավոր եղանակով (էլեկտրոնային ստորագրությամբ) հավաստել, թե կոնկրետ որ չափաբաժնին է առաջարկ ներկայացրել Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանը, ընդ որում, եթե առաջարկը 1-ին չափաբաժնի մասով է, հետևաբար անհրաժեշտ է շտկել ներկայացված Հավելված N 1-ը և Հավելված N 4-ը՝ դրանցում ճիշտ նշելով չափաբաժնի համարը: Նշված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հանձնաժողովը հնարավորություն չի ունենա գնահատելու մասնակցի հայտը և այն կմերժվի:

- «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում կազմակերպության տնօրեն նշված է Ա. Խաչատրյանը, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրված են Սամվել Խաչատրյանի կողմից: Որպեսզի էլեկտրոնային ստորագրության առկայությունը հանձնաժողովի կողմից գնահատվի բավարար, անհրաժեշտ է ներկայացնել Սամվել Խաչատրյանի կողմից «Մեդիտեք» ՍՊԸ-ի հայտը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ լիազորագիր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի կողմից նույն օրը պարզաբանվեց, որ գնային առաջարկն ըստ էության ներկայացված է 2-րդ չափաբաժնի մասով՝ N1 Հավելվածին համապատասխան, «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից նույնպես սահմանված ժամկետում շտկվեց ահնամապատասխանությունը և հիմք ընդունելով նշված հանգամանքները՝ հանձնաժողովը, **07.12.2017թ.** կայացրած նիստում «Մեդիտեք» ՍՊԸ-ի և Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի հայտերը գնահատեց հրավերի պահանջներին համապատասխան:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. ***Տես արձանագրությանը կից Հավելված 1***

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **08.12.2017թ.** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող են ճանաչվել հետևյալ մասնակիցները՝ ***Տես արձանագրությանը կից Հավելված 1***

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի գների ամփոփում

Հ/հ	Գնման առարկա	Չ/Մ	Քանակ	Ընդհանուր գին /նախահաշվային/	ԱՁ Գևորգ Հովհաննիսյան		Մեդիտեք ՍՊԸ		Սիտի սայնս ՍՊԸ		Հերմիես Ֆարմեց ՍՊԸ		Էսզեթ Ֆարմա ՍՊԸ		ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ		Նատալի ֆարմ ՍՊԸ		Ի-ին տեղ(հաղթող) գրաղեցնող մասնակից
					Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	**Ռենտգեն նկարների ժապավեններ** /Carestream կամ համարժեք ֆիրմայի չոր երևակման ժապավեններ 35X43 N125/	տուփ	30	5,010,000									4,110,000	4,110,000					Էսզեթ Ֆարմա ՍՊԸ
2	**Ռենտգեն նկարների ժապավեններ** /Ռենտգեն ժապավեն/	տուփ	200	5,588,000	4,360,000	4,360,000	7,200,000	7,200,000					4,960,000	4,960,000					ԱՁ Գևորգ Հովհաննիսյան
3	**Վիրակապեր** /Բինտ ստերիլ/	հատ	60,000	8,160,000					5,820,000	5,820,000	8,094,000	8,094,000			5,819,400	5,819,400	7,260,000	7,260,000	ԼԵՅԿՈԱԼԵՔՍ ՍՊԸ
4	**Բժշկական թանզիֆ (մարլյա)** /Թանզիվ բժշկական/	մետր	170,000	12,580,000					13,311,000	13,311,000	15,708,000	15,708,000			14,501,000	14,501,000	12,257,000	12,257,000	Նատալի ֆարմ ՍՊԸ

Ըստ ներկայացված տվյալների մասնակիցները ԱԱՀ չեն վճարում:

Գնահատող(ԳԱՊ)՝ Հ. Մելիքյան

Գնահատող՝ Հ. Ավետիսյան

Գնահատող՝ Ն. Հարությունյան

Գնահատող՝ Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Ա. Մաղաքյան

08.12.17թ.

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Ն. Հարությունյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան

08.12.17թ.